



ԱՌՊԱ ՓԱԹԵԹ՝ ԲԱԶԱՅԻՆ

ՏԱՐԲԵՐԱԿ 1:

Երբ ապահովագրվում է սոցիալական փաթեթի շահառուի մինչև 50 տարեկան ամուսինը/կինը
Ապահովագրական ծածկույթ՝ **5.000.000 ՀՀ դրամ**,
Ապահովագրավճար՝ **72.000 ՀՀ դրամ**

ՏԱՐԲԵՐԱԿ 2:

Երբ ապահովագրվում են սոցիալական փաթեթի շահառուի մինչև 21 տարեկան երկու զավակները
Ապահովագրական ծածկույթ՝ **5.000.000 ՀՀ դրամ**,
Ապահովագրավճար՝ **72.000 ՀՀ դրամ**

ՏԱՐԲԵՐԱԿ 3:

Երբ ապահովագրվում է սոցիալական փաթեթից օգտվող անձի մինչև 27 տարեկան մեկ զավակը
Ապահովագրական ծածկույթ՝ **5.000.000 ՀՀ դրամ**,
Ապահովագրավճար՝ **52.000 ՀՀ դրամ**

ԲԱԶԱՅԻՆ փաթեթը ներառում է հետևյալները /մանրամասները ներառված են Պայմանագրում/՝

1. ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ

- 1.1. թերապևտիկ բուժում պահանջող հիվանդություններ,
- 1.2. վիրաբուժական բուժում պահանջող հիվանդություններ,
- 1.3. հիվանդանոցային բուժման համար իրականացվող լաբորատոր և գործիքային հետազոտություններ:

2. ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱՏՈՒԿ ԵՎ ԴԺՎԱՐԱՄԱՏՉԵԼԻ ԱՂՏՈՐՈՇԻՉ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 20-ի N 53-Ն հրամանով հաստատված ցանկ:

3. ՆԱԽԱԿԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԶՆՆՈՒՄ*

- 3.1. արյան ընդհանուր քննություն,
- 3.2. մեզի ընդհանուր քննություն,
- 3.3. էլեկտրասրտագրություն,
- 3.4. ընդհանուր պրակտիկայի բժշկի խորհրդատվություն,
- 3.5. սրտաբանի խորհրդատվություն,
- 3.6. վահանաձև գեղձի ՈւՁՀ,
- 3.7. որովայնի և փոքր կոնքի օրգանների ՈւՁՀ,
- 3.8. շագանակագեղձի ՈւՁՀ՝ 21 տարեկանից բարձր անձանց համար,
- 3.9. կրծքագեղձերի ՈւՁՀ՝ 21 տարեկանից բարձր անձանց համար,
- 3.10. ուրոգենիտալ քսուկի միկրոսկոպիկ քննություն՝ 21 տարեկանից բարձր անձանց համար:

* Ապահովագրված անձը բազային փաթեթով նախատեսված բժշկական ծառայություններից կարող է օգտվել միայն նախնական պարտադիր բժշկական զննում անցնելուց հետո: Նախնական պարտադիր բժշկական զննում անցնելու համար անհրաժեշտ է զանգահարել «Նաիրի Ինշուրանս»-ի շտրջօրյա գործող հեռախոսահամարով:

Ուշադրություն: Եթե բժշկական ծառայությունը իրականացվում է արտասահմանից հրավիրված բժշկի կողմից և/կամ ոչ գործընկեր բժշկական հաստատություններում, ապահովագրական ընկերությունը հատուցումն իրականացվում է ՀՀ-ում առկա բժշկական հաստատություններում տվյալ ծառայության համար գործող միջին գնի սահմաններում: